

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Դժուարագացուցանելի բան մը ըստծ պիտի չըլլամ, երբ յայտ-
նեմ թէ ժամանակակից Թրքահայ գրականութեան ամէնէն անարիւն ե-
րակը՝ քննադատական—ուսումնասիրականն է:

Բանաստեղծութիւն՝ յորդառատ. վիպական գործեր՝ նոյնքան ա-
ռատ, իսկ քաղաքական աօրեայ խնդիրներու մասին հապճեպ հրատա-
րակութիւններ այնքան շատցած են որ պարզապէս մարտի դեր կը կա-
տարեն մեր գրական դաշտին մէջ: Այս ամենուն փոխարէն՝ գրական քնն-
նադատութիւնը, վերլուծական ուսումնասիրութիւնը, մտածուած, բաղ-
դատուած, չափուած և ուսուցանող երկերը այնքան ցանցառ դարձած են
այսօր, որ կարծես հայ խորհողութիւնը անսկիացած ըլլար:

Վաղանցուկ փառքերու և անպատուանդան արձաններու դիւրայտդ
մարմաջը, ու շատ անգամ ալ գիրքը սոսկ վաճառելի տպրոնք մը նկա-
տելու խանութիւնական մտահոգութիւնը այնպէս մը վարակած ըլլալ
կը թուի մեր մտաւորականութեան արդի ներկայացուցիչները, որ ա-
նոնք, աննշան բացառութեամբ մը, կարծես մտցած են կարդալ: Կամ
այլեւս չեն գիշանիր մատենադարանը իրենց խորան ըրած ու զլուխնին
փայրահակ կարդալ ու մտածել, դասել ու վերլուծել, եւ իրենց մտա-
ւորական երկունքին արդիւնքը պարզեւել հասարակութեան:

Յրանասցի մուկունդ քննադատ մը՝ Գիւլիլիէ Ֆլէօրի, օր մը իր
մէկ եղբայրակցին ցոյց տալով իր մատենադարանը՝ կ'ըսէր. —

«Ճարտասանութիւն, գեղեցիկ դպրութիւնք, խմաստասիրութիւն,
պատմութիւն եւ գրական բոլոր սեռերը կը գտնէք այս մատենադարա-
նին մէջ, առանց հաշուելու քննադատական գործերը, որոնք կը պար-
փակեն միւս բոլոր գրական սեռերը. արդարեւ, քննադատը միանգամայն
ճարտասան մը, խմաստասէր մը և պատմաբան մըն է»:

Գիւլիլիէ Ֆլէօրիին պէս խորհող քանի՞ զլուխ կը հաշուէ մեր
մտաւորականութիւնը. ՍէնՅ Պէօլ մը, Թէն մը և կամ Ֆէրաինան
Պրիւնը՞ ի՞նչ մը, որոնք իրենց գրական քննադատութիւններով ֆրանսա-
կան նոր գրականութիւնը ձեւակերտած ու սրբադրած են. ինչո՞ւ իրենց
աշակերտողները չեն ունենար մեր մէջ, երբ ֆրանս. դիւրին գրակա-
նութեան այնքան աննշան ներկայացուցիչներ կը Թարգմանուին կամ կը
նմանցունին:

Եր. Մեսեանան՝ իր ներկայ երկով՝ հետեւելի ու օգտակար շեղում

Մը կ'ընէ մեր գրականութեան կոխտուած արտհետեանքէն, և մեզի կուտայ ճաշակը վերծանութեան, վերլուծութեան և ուսումնասիրութեան: Այս օրինակը նոր ու երիտասարդ գրողէ մը՝ ինչպէս է Եր. Մեսեանի՝ զալուն համար մանաւանդ, կրկնապէս սրտազնդիչ է. և անկասկած, մեր մտաւորական կեանքը շատ աւելի լուրջ ու կուռ հաստատութիւն մը պիտի դառնայ, եթէ Եր. Մեսեանի խղճամտի հետեւորդներ ունենայ:

Յառաջաբան գրողի մը պարտականութեան զիժէն դուրս կ'իջնայ իրեն ներկայացուած գործին քննադատութիւնն ընել. այդ պատճառով՝ հոս միայն պիտի ցոյց տրուի թէ ի՞նչ կը բովանդակէ այս հատորը:

Իդոր այն ընկերային ձգտումները, որոնց հակիրճ վերլուծումը կ'ընէ Եր. Մեսեանի իր ներկայ աշխատասիրութեամբը, թէև կը վերաբերին առաւելապէս Ֆրանս, ազգին ու գրականութեան, բայց հետեւելով Անաթոլ Յրանսի այն վարկածին թէ՛ չլու քննադատը իր անձնական կեանքի պարագաներն ալ կը պատմէ՝ զլուս գործոցներ վերլուծած միջոցին: Մեսեանի մերթ կը յայտնէ նաև անձնական համոզումներ և երեւան կը բերէ այն կապակցութիւնները, որոնք գոյութիւն ունին Ֆրանսական ու հայկական կեանքին ու գրականութեան միջև:

Այս աշխատութիւնը կատարած միջոցին, Եր. Մեսեանի՝ հակառակ իր prononce ազգայնականութեանը՝ յաշողած է ըլլալ անաչտու և երբէք միակողմանի, այլ պարզաբուն համազրոյ մը ընկերային ընդդիմաբար ձգտումներու: Ընդհանուր եզրակացութիւնը զոր ընթերցողը պիտի տանի իր հետ, սա է թէ, Ֆրանսայի ազգայնական ու ընկերվարական վարդապետութիւնները չէ՛ կարելի նոյնութեամբ ընդունիլ և պահել մեր մէջ: Իսկ տպագրութիւնը՝ զոր ընթերցողը կ'ունենայ այս գիրքը կարդալով ու նոյն իսկ անոր մէջ յայտնուած զանազան համոզումներուն տարակարծիք ըլլալով, այն է թէ՛ Եր. Մեսեանի ճարտար ու յամառ piocheur մըն է, որ Ֆրանսայի եօթնեակ հոյակապ գլուխներուն գործերն ու մտածումները վերլուծեր, պրպտեր, համադրեր ու մեր հասարակութեան ընծայեր է, որպէս զի կարդան և ուսանին, բաղդատեն ու եզրակացնեն մանաւանդ անոնք որ թերեւ շատ թեթեւօրէն հայացուցած են Արեւմտեան ընկերային վարդապետութիւնները:

Իր այս ապերախտ աշխատութիւնը կատարած միջոցին Եր. Մեսեանի չէ քնաւ նմանած մրջիւնին որ հոսկէ հոնկէ հաւաքածներովը գողոնաժողոց շտեմարան մը կը շինէ, այլ եղած է մեղու մը, որ ծաղիկներու բաժակէն կը քաղէ իր արտադրելիք նիւթին նախնական տարրերը, զանոնք կը խմորէ, անոնցմով պատրաստելու համար քողոցախում մեղրը: Եր. Մեսեանի մեղրը թերեւ չունենայ այն միօրինակ անուշութիւնը և ախորժելութիւնը, որ մեղուինը ունի. բայց ի՞նչ վրոյժ-

քննադատը, երբ անկեղծ է ու անկաշառ, միշտ իրաւունք ունի մտիկ
ըլլուելու. ու չեմ կարծեր որ, ունէ մէկը կարենայ կուսակցականի մո-
լեւանդ դիտումներ վերագրել հեղինակին: Բոլոր անոնք որ իրենց նորա-
զանդ խանդավառութիւններուն մէջ վիրաւորուած պիտի զգան ինքզինը-
նին՝ այս գիրքը կարդայով. բոլոր անոնք որ իրենց որդեգրած վարդա-
պետութեանց յառի ու քննադատուած կողմերը պիտի տեսնեն հոս, զայ-
րանալէ ու հիասթափուելէ առաջ երանի Թէ մտածեն թիւեռի խօսքին
վրայ. — Ա՛հն՞ Երցողին ուշադրութիւնը գրուելու իրաւունք ունին և կը
գրուեն արզէն այն բաները, որոնք իրենց ճշմարտութեան, մեծութեան,
զանազանութեան և անսպառ բեղմնաւորութեան մէջ կը ներկայացունին»:

Ընկերավարականութիւն, անխլխանականութիւն, ազգայնականու-
թիւն և ժողովրդավարութիւն (*). — ահա՛ ընկերային այն բառակ ձևը-
տումները, որոնց վերաբերումն ու յարաբերական կապը՝ ֆրանսական
զրականութեան հետ՝ կը բացատրէ Եր. Մեսեաեան:

Թուրքիոյ մէջ, ազատ մտնելի հաստատման Թուականէն ստղին,
շատեր շատ բան գրեցին ու խօսեցան այս ընկերային վարդապետու-
թեանց շուրջ. այդ ամենուն և ներկայ աշխատասիրութեամբ ալ ըսուած.
նեքուն վրայ՝ օգտակար ու արդար է բանի մը խօսք աւելցնել Հայ-
ազգայնականութեան մասին, որուն ստեմանն ու իմաստը չեմ հասկնար
Թէ ինչո՞ւ չեն ուզեր ըմբռնել ճնայթնալիզմի հակառակորդները:
Nationalismը (ազգայնականութիւն) chauvinismeին (ազգայնամոլու-
թիւն) հետ շփոթող այդ իմաստակները կը Թուին անգիտանալ Թէ՛ ամէն
ազգ ու ամէն երկիր իրեն մասնայատուկ ազգայնականութիւնը կըր-
նայ ունենալ, և հետեւաբար, ճնայթնալիզմը տարբեր երկիրնե-
րուն մէջ կը ստանայ տարբեր նշանակութիւն: Ազգայնականներ կան
ամէն երկրի մէջ ալ, բայց իրենց desiderataն կարելի չէ նոյնացնել.
այսպէս՝ հանրապետական Թրանսայի մէջ ազգայնականներ կը համար-
ուին ֆրանս. Թագաւորութեան վերադարձին ցանկացողները, այսինքն
յետաշրջականներ. մինչդեռ, Թրանսայի սրտէն բաժնուած մէկ հողամա-
սին՝ Ալլաս Լօռէնի մէջ ազգայնական ըլլալ, կը նշանակէ գերման տի-
րապետութեան լուծը անգոսնել և յուսալիք աչքերով դէպ ի Թրանսա-
յառիլ: Իռլանտայի մէջ ազգայնականները անոնք են, որ կ'ուզեն իրենց
մայր երկրին անջատումը՝ Անգլիայէն, և իռլանտական ինքնավարու-
թեան մը (home rule) հաստատումը: Բոլոնիոյ ազգայնականները կը

(*) Democratie բառը սովորաբար առամկավարութիւնն կը
Պարզմանեն մեր մէջ: Ըստ մեզ, ճշդագոյն է ըսել՝ ժողովրդավարու-
թիւն: Բ-ամկավարը, ռամիկ, vulgaireի իմաստ ունի:

ձգտին պահպանել իրենց ցեղային մտածիւնը և ազգային բարքերն ու ու առանձնայատկութիւնները, ուսուցելովն Մոլոքին բազուկներուն մէջ չի ճզմուելու և չի ձուլուելու համար:

Իսկ ի՞նչ է Հայ ազգայնականութեան դաւանանքն ու ձրգտումը. այնքան արարզ և դիւրոհասկնալի է սն, որ միայն չաբամիտները և ասոյիտիլզմոյի սուտ առաքեալները պիտի փորձէին խեղամիւրել անոր նուիրական ոգին: Հայ ազգայնականութիւնը առանց ըլլալու յետադիմական, կամ կղերամիտ և կամ ազգամիջեան բաղխումներ յառաջ բերոյ բարոզութիւն մը. պարզապէս է՝ մեր ազգային անխաթարելի գոյութեան, մեր ցեղային պատմական աւանդութեանց, հայ լեզուին, կրօնքին ու գրականութեան, ազգային պատուին, կեանքին և ինչքին, հայկական յատկանիշերուն ու հաստատութեանց անվտանգ պահպանման ձգտող վարդապետութիւն մը: Ու ափկա այնքան տիրական ձայն մըն է, և մեր արլի քաղաքական պայմանները այնքան հարկեցուցիչ կերպով մեզի կը ընդհնեն այդ ձայնը, որ հայ ընկերվարականներէ շատ շատերը պարզապէս ազգայնականներ կը դառնան, թերե՛ւս անգիտակցարար, երբ ինքզինքնին դէմ առ դէմ կը գտնեն կեանքի իրականութեանց: Հայ ազգայնականութիւնը կը դաւանի, թէ ոյժերու ցրուում և վատնում կը նշանակէ, այս պահուս, մտահոգուիլ միշտազգային տառապեալներու վիճակին բարւոքմամբը, երբ հայ ազգային կեանքը՝ այնքան լեցուն վէրքերով ու հոգերով՝ ոյժերու կեղրոնացում կը պահանջէ: և ինչպէս ուրիշ մեծ ազգեր՝ տիեզերքի վրայ իրենց գոյութիւնը խարսխելէ ետք միայն սկսած են այլաաիրական քարոզութեանց, մեր ազգն ալ հարկ էր նախ իր մորթը փրկէր, աւելի ազէկ ու աւելի շատ ուրիշներուն ոգտակար դառնալու համար:

Եր. Մեսեաեանի ներկայ գործը՝ ճշդելով սահմանները ընկերային վարդապետութեանց, արդեօք այլեւս վերջ մը պիտի դնէ՞ հայութեան ծոցին մէջ ճարակած ընկերվարական-ազգայնական հակաճառութեանց և ուժամադութեանց: Եթէ այո՝ այն ատեն չպիտի վարանէինք ըսել թէ **Սմաւեան** ետք, որ ազգային քաղաքական վէրքի մը վերահասումն է, և **Աւաւաւեան** ետք, որ ազգային յեղափոխական կեանքի մը վիպումն է, Եր. Մեսեաեան իր այս երրորդ երկով նոյնքան ազգային ու յեղափոխական ծառայութիւն մըն է որ մատուցած պիտի ըլլայ:

ԼԵՒՈՆ ԼԱՐՆՑ